

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար սարև-
կան 10 գրանի. վե. ալ-
սեայ 5 գրան, Արսաւահ-
մանի համար սարևկան 12
գրանի, վեցաւսեայ 6 գր.

ԿԱՆԻՆԿ ԿՃԱՐՆԵԼԻ

Գրութիւնի և ս ճեկ տրուի:

Իրանացուան տոյր 20 սան-
րիւն է:

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ՇՆԱՐԱԹ

Նուակ եւ դրամ դրկիչ
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԾՏԱՐ ԵՒ ՈՐԵՖԵՐԱԹԻ ԵՒ ՇՆԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
А Д В О К А Т Ъ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ՅԱՌԱԶԱԴԵՍ—ՅԵՏԱԴԵՍ

—)(—

Մարդկային ամէն կեդրոննե-
րուն մէջ, հեղեղ մը կայ յոր-
ձանքոս և փրփրուն որ միշտ իր
վաղքին մէջ հին աւերակներէ
հիւսուած թուրքի մը կը հանդի-
պի զինքը կասեցնող, տկար
պատուար զոր իր արշաւանքին
մէջ կը սապալէ ու անոր փոսած
խրեակներն ալ կը տանի իր հետ:

Ասիկա առաջդիմութեան յա-
ւիտենական յաղթանակն է տիե-
զերքի ամէն կէտերուն վրայ:
Եւ ինչպէս որ դարերը իրարու
կը յաջորդեն և ոչ ոք կրնայ
կասեցնել անոնց հալովումը, այն-
պէս ալ անոնց թեւերով աշխարհ
եկած նոր գաղափարներուն գէմ,
բռնակալի, յետագէմի ո՛չ մէկ
ուժ կրնայ արգելք հանդիսա-
նալ:

Կարծես մարդկային ընկերու-
թեան ամբողջ ապագայ ճակա-
տագիրը կանխատեսմանութեամբ
վճռուած է: Անձանութիւն մէջ
կեցած ձեռքեր կան որոնք վե-
րէն կը նետեն աշխարհի վրայ
ապագայի շէնքին հիմքերը, քան-
զելով ինչ որ հին է, խախտե-
ալ և հակառակ այն կատարելագործ-
ման որուն կը ձգտի ընկերու-
թիւնը:

Այսօր ամբողջ աշխարհ կը վա-
զէ գէպ ի լոյս, գէպ ազատու-
թիւն: Մի՛ ըսէք թէ թուրքը
յաղթեց յոյներուն, թէ Հայաս-
տանը աւերեց, թէ Կրեմէն մնաց
ինչ որ էր, թէ Քուպան հակա-
ռակ իր զիջագնա ան դիմա-
դրութեան կրնայ մնալ հարստա-
հարիչ Սպանիոյ ձեռքը: Նոյնիսկ
Սալզպերիններու, Հանթթոններու,
Լոպանօֆներու և ամբողջ խաբ-
դախ ու նենգամիտ գիւտնադի-
տութեան յաղթանակները վա-
զանցիկ են, վասնզի անձանու-
թիւն ձեռքը արդէն նոր և վերջ-
նական գաղափարները նետած է
աշխարհի մէջ:

Հայն ալ իրբեւ որոշ ազգ
մը, խորհող տարրերէ բաղկա-
ցած, բնական է որ մարդկու-
թեան մնացեալ մասին պէս ինք
եւս կրէ իր ծոցին մէջ այս եր-

կու յառաջդիմական և յետա-
դիմական հակառակամարտ տար-
րերը:

Իայց եթէ մեծ երկիրներու
մէջ անհատական ահագին շահեր
կան որոնք կը հակառակին ճշ-
մարիտ արդարութեան վերջնա-
կան տիրապետութեան, գոնէ
մեր մէջ առոնք ալ գոյութիւն
չունին և պատրուակները այն-
քան գոեհիկ են որ արգահատանք
կը շարժին:

Ա. ոնք Սաղմոսի, երեմեական-
ներու հերոսներն են, շապիկի
և հողաթափի մարդեր, ապիկար
հողեւորականութեան մը ստրուկ-
ները, զուրկ ու է վեհանձն զգա-
ցումէ, — և կամ, դրամի մար-
դը, վաշխառուն որ ամէն բարե-
շրջումի մէջ ապրանքի փճացում
և դործառնութեան շփոթը դու-
շակելով մահու չափ կատէ զա-
նոնք, և նախամեծար ձեպելով
կանգուն մը կերպասը ամբողջ
աշխարհը ազատութենէն, իր
ստոր դիրքէն որքան ահաբեկած
այնքան ալ սխալալ նայուածք-
ներ կարծակէ վերը վառուած ա-
զատութեան բոցավառ ջահերուն
վրայ: Ասոնք կրնան երբեմն բա-
րեմիտ անձեր ալ եղած ըլլալ:
բայց սա ստոյգ է որ անցեալ
դարերու մարդերն են որ հա-
րկարաւոր տարիներ ետքն ալ
ապրիլ, բարոյական կեանք մը
ունենալ կուզեն, ինչ որ անխա-
րելին ու անբնական է:

Երբ ազգին որոշ մէկ դասու-
կարգը շահու, տկարամտութեան
կամ խառնուածքի նկատմամբով
աշխարհի այս շարժման մէջ ոտ-
քը դետիլն զարնելով կը դո՛հա-
նայ առանց թիլ մը յառաջանա-
լու իզձ ունենալու, բարեբախ-
տութիւն է մեզ համար որ ներ-
կայի կեանքով ապրողներ ալ ու-
նինք մեր մէջ, յառաջդիմական-
ները, անոնք որ երկտասարդ,
ժիւր, հարուստ թէ ազգաստ, բա-
բախուն սիրտ մը կը զգան լանջ-
քերնուն ներքեւ, ուժով արին
մը որ երակներնուն մէջ կը հոսի
և որոնք կուր, ջանք ու կեանք
չեն ինչպէր բաշխի սխալութեան
ընկե-
րա ան, կրթումն սարքն ու
բարքը մեր մէջ և որոնք բար-

յա՛ն աննկուն ուժ մը կը զգան
նեւսիդիւնին սլանալու գէպ ի
այն իտէալը որ այսօր ամբողջ
աշխարհին իտէալն է, ազատու-
թիւնը:

ԳԱՄԵՐ—ԱՐՇԱԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆԶ

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

—)(—

Ե. ՅՈՒՅՍԿ

Փուժար Դ. ցուցակի	Յր.Սճ. 106.80
Ֆիլիպպի ազգային վարժա- րաններու Տնօրէնին ձեռ- քով աշակերտներուն մէջ կատարուած հանդանակու- թիւնը	
Մանչեսթրու վարժարանին	82.—
Սոլիկանց »	20.70
Մանկապարտէզին	17.30
	() 176.80

ՈՒՅ (Ֆիլիպպի)	1.—
Սիլիստրէի երկսեռ վարժա- րաններու Տնօրէնին հրա- ւերին վրայ հետեւեալ սա- ները իրենց մէջ հաւաքած լուծմաներով փութացած են մասնակցիլ Շարժումի կող- մէ ի նպաստ Հայաստանի սովատանջներու բացուած հանդանակութեան:	
Օր. Եղիսարէթ Թաղեօրեան	2.50
» Եղիսարէթ Մանուկեան	50
» Թագուհի Մարգարեան	2.—
» Հայկուհի Պապիկեան	50
» Հոսիսիմ Եղաբեկեան	1.—
» Մարութի Թաղեօրեան	50
» Վեյիմ Զաքարեան	1.—
» Տիգրանուհի Յակոբեան	1.—
»	2.—
Չանազան աշակերտուհիներէ	1.—
Պր. Արտաշէս Գրիգորեան	2.—
» Բիւզանդ վարժապետեան	20
» Կեղամ Կարապետեան	2.—
» Կէորդ Էնկիպարեան	1.—
» Կէորդ Թովմասեան	3.—
» Կէորդ Համբարձումեան	5.—
» Գրիգոր Թովմասեան	2.—
» Գրիգոր Յովհաննէսեան	1.—
» Թագուր Գասպարեան	1.—
» Հայկ Պապիկեան	1.—

() Հանդանակութեան այս առա-
ջին գումարը, 176 ֆր. արդէն շԵՐ-
կած ենք Կուրիի և Պաշխալ լրագ-
րին անօրէն Տ. Տիրան Պէճաղի, որուն,
ինչպէս կանխաւ յայտարարած էինք,
հետզհետէ պիտի հասցնենք գոյացած
գումարները:

Պր. Հայրապետ Իսրայէլեան	1.—
» Մարգար Գարութիսեան	1.50
» Մարգար Մարգարեան	2.—
» Գարութիս Արապաճեան	2.—
» Գարութիս Ուղղունեան	1.—
» Պարոյր Սիմոնեան	1.—
» Ռուբէն Փափազեան	1.—
» Մարգար Մշկոյեան	30
» Մարգար Մարգարեան	3.—
Համագումար	220.80

Ֆիլիպպի և Սիլիստրէի հայ
երկսեռ ուսանողութեան պատ-
ուանքի մը: Սա ամենէն աւելի
սրտի դպչող ու թերազրիչ առի-
թուն մէջ իսկ յայտնի կըլլայ թէ
մեր ազգային կենսականութեան
էն ջղուտ ու էն հզօր տարրերը
կը կազմեն մեր պատանեկու-
թիւնն ու մեր երիտասարդու-
թիւնը: Նոր սերունդը. ան կը
տեսնայ մեր ցաւը իր էն նուրբ
մանրամասնութիւններուն մէջ,
ան կը լսկծայ, ան կ'օժանդակէ,
ան կ'ողորմի: Աւելի քան երեք
չարաթ եղաւ որ հեռուում ձեռ-
նարկած է այս հանդանակութեան,
ո՛ր պուլկարահայդ փութաց' իր
կարողութեան չափով՝ օգնու-
թեան հասնիլ իր սովահար հայ-
րենակիցներուն. հապա Ռուժա-
նիոյ ջոջ ու հարուստ հայրը.
ասոնք ո՛ր առիթին և ո՛ր ա-
տենին կապանն ապացուցանելու
համար թէ իրենք ալ Հայկայ
սերունդին, աշխարհի ամենէն
հին ու պատմական ժողովուրդ-
ներէ մէկուն կը պատկանին:
Չե՛ն գիտեր թէ հոն, հայրենի-
քին խորը հեծող, տառապող ա-
րարածը իրենց միտին ու իրենց
արեան մասը կը կազմէ: Ըսելիք
չիկայ եթէ այդ հայերը միտուը-
նին դրած են բոլորովին նոյնա-
նալ օտար տիրող տարրին հետ,
հեռու նետելով ամէն ինչ որ կայ
հայու գրոշմը կրող, ազգասի-
րութիւն, հայրենասիրութիւն,
լեզու, կրօնք, աւանդութիւն
և այլն:

Սակայն, այնչափ դառն է այս
մուսուսը որ երբքը չպիտի կըր-
նանք հաստալ թէ Ռուժանիոյ
ստուար հայութիւնը բոլորովին
սողորուած է այսօրինակ զգա-
ցումներով, մինչեւ որ իր ազ-
գայնութիւնն հերքող բացարձակ

ու ահնեբեւ նշաններ ցոյց չտար եւ կը յուսահար թէ երկր. ք շի պիտի գայ սոյգ աղետալի հերքումը, և ընդհակառակը մասաւոր ապագայի մը մէջ վերակենդանութեան նշաններ ցոյց պիտի տան Ռուսական աշխարհը: Իսկ այժմ տեղը չըլլալով Ռուսական հայ տարրին ազգային կեանքի պայմաններուն վրայ վնաս թիւն մը կատարել, մենք միայն կուզենք փոքր գրգռել մը ապագայ սրտերուն խորը մնացած ազգասիրտ թեան և մարդասիրտ թեան զգացումին, որպէսզի Հայաստանի մեր սովորական ազգակիցներուն անհանգուստ վիճակը քիչ շատ բարեւոյցով մը կրէ:

Հասկցողին ու զգացողին համար շատ լուի են այս քանի մը տողերը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌՈՒ ԲՂԹԱԿՑԻ)

—)(—

4. Շոյիս, 618 Ապրիլ

Այս շաբթու ալ բաւական թըւով անձեր վերագործան ազգակիցներ. ասոնց վիճակը նկարագրել աւելորդ է. աչք սղբերգութեան առաջին վարագոյրը պուրակական հողին վրայ բացուած է. ամէն թաղի Աղքատախնամ ընկերութիւն իր շրջանակի կարօտեալներուն կարելիութեան սահմանին մէջ օգնութեան կը հասնի. իսկ Պատրիարքարանէն գաւառներ կը զրկուին մասնա ի նպաստներ որոնք պէտքին հետ բաղադատելով շատ անբաւական են:

Երկայ սօներուն ստիժի ժողովուրդը աղքատասիրութեան գեղեցիկ օրինակներ կուտայ, իր ունեցածէն մաս մըն ալ անոնց հանելով, բայց կարօտութիւնը այնքան ընդհանրացած է, որ այսքան հացով ու ձուկով բազմութիւն մը կը զատուի: Համար Բրիտանոս պէտք է ըլլայ:

—Պատրիարքարանի յարաբերական գործերը զարձակ անստուգութեան մատնուած են: Որմանեան Պատրիարք հիմայ կը զգայ թէ շարաշար սխալեցաւ Ալեքսանդրեան Սրբազանի Եթովպիկոսական ընտրութիւնը բեկանելու մասին յառաջընթաց ըլլալով: Կառավարութիւնը իր պահանջման մէջ յայտարար ըլլալով, ելեր կրէ թէ ընտրելի եպիսկոպոսներուն մէջէն պէտք է մատուցանել (ճիշդ յունական գրութեամբ) և թէ Ստեյրի եպիսկոպոսներուն մէջէն պէտք է ընտրուի կաթողիկոսը: Խառն ժողովը պատասխան մը զրեց այս մասին, բայց որ և է սղեցութիւն շունեցաւ և մինչև իսկ պատասխան ալ չը տրուեցաւ: Միւս կողմէն զատական նախարարութիւնը իր ջանայ կիլիկիոյ թեմին մէջ ար-

հաւիրք սիւսելով Գաղանձեան Եղիզանէս անուն եպիսկոպոսը կաթողիկոս ընտրել տալ: Այս այն եպիսկոպոսն է, որ քանի մը ընկերներով կիլիկիա վախճաւ և Սիսի մէջ օծուած ձեւացուցած էր ու յետոյ Պատրիարքարանի պնդման վրայ Պետրոս զրկուած: Կը լսուի որ հիմա Ատանա կը վերագառնայ, կառավարական սնորհներով մը: Մը հաջնէք թէ ով և ինչպիսի մէկն է Գաղանձեան, բառին բուն նշանակութեամբը անպիտան մէկը, որուն ոչ թէ վիճակ մը այլ ախտ մըն ալ չը կրնար յանձնուիլ կառավարելու: Ինք արգէն Մկրտիչ կաթողիկոսի օրով կարգադրած եղած է և իր գիւնդուութիւնը առածի կարգանցած է ստանալի կողմերը: Այս երեւոյթիւն առջև շտաբ մնացած է Օրմանեան և հիմակ աչքերը կը բացուին տեսնելու համար թէ ուր ինչպէս է և ուր քըշած տարած է իրեն հետ իլիկիոյ թեմականները: Ինքն էր որ յատենի խառն ժողովոյ յայտարարեց թէ «Ի՞նչ Ալեքսանդրեանի ընտրութիւնը բեկանէք, կառավարութիւնը պիտի արտօնէ մեր ուշաձր ընտրելու ըստ նախնի ի յայտնեցո՛ւ առկայ շատ ամէն ազգեցութիւն լանկցոյց կ'օն. Ժողովի անդամներուն վրայ, որպէսզի բեկման մասին քառտան: Ահա փառաւոր հետեւանքը»:

—Ատանաէ քաղաքական յանցանքով Էտիրնէ փոխարտուած հաւերու նախնական հարցաբնուութիւններն սրբաբարձ են և 28 հոգիէ ու թը մէջն արձակուելով մնացելով 20 ի թղթերը զատարանին յանձնուած են: Գառարանի ներկայացուցիչներուն մէջ կը գրտնուին Տ. Աղիլի քահանայ Գուր Սարգսեան ու վերջերս Պօլիս եկած էր, Տօքթ. Թէրզեան, Վահան Մալեգեան և այլն:

Այս գործին մէջէն հետաքրքրական խնդիր մըն ալ երեւան եկաւ. մէկ տարի առաջ Փոնտուցի Նիկողոս եպիսկոպոս և իր ընկերներէն կիրակոս անուն վարդապետ մը, որ սրիկայութիւն պակաս չէ թուցած, և որոնք Գաղանձեանի կուսակիցներէն և Սիսի խնդրին հերոսներէն էին, Ատանա վերագործան Պօլսէն և ուղեցին կրօնական պաշտօն վարել, մինչդեռ ասոնք նախորդ Պատրիարք Տ. Մատթէոս Իզմիրլեանի օրով զազրեցուցուած էին պաշտօնէ: Ժողովուրդը ընդդիմացաւ ասոր, որուն հետեւանք Նիկողոս եպիսկոպոս (որուն ազգասիրտութիւնը ծաւալուած է սարճիկ վրայ տուել կառավարութեան իրբեւ խռովայնը: Այդ մարդիկ այն ատեն բանտարկուեցան և ասոնցմէ մէկը Ա. անախ Առաջ. աեղապահ Տ. Խաչատուր վարդապետ հեռացուեցաւ Արտանաէ: Հիմայ այդ բանտարկեալ-

ներուն դատն ալ Էտիրնէ փոխարտուած է և որովհետեւ Նիկողոսի և կիրակոսի մասնութեանց երեսէն ձեռքալալուած են, կառավարութիւնը Պատրիարքարան կոչնագիրը զրկած է ասոնց անուամբը, որպէսզի այն յայտարարութիւնը զոր զազոնաբար ըրած էին՝ գառարանի առջև յայտնապէս ընեն. ասկից անդին խայտառակութիւն և արելը է երեւակայել:

—Գաւառներէն սրտածմիլիկութեբ կը հասնին. կառավարութիւնը ամէն ճնշում բանկընելով տուրքերը կը գանձէ. այս մասին գրուած է կառավարութեան. բայց ո՞վ է լսողը:

—Արտարին զս ծերու նախարարը ստեպ գիւնդներ կընէ Ռուսիոյ գեպտանին մօտ, որպէսզի եթէ հնար է Ռէնս Ետրիկոսի կրէ էի կուսակալութեան անուանուած յետաձգէ: Այս մտօք եղած ամէն գիւնդով ապարդիւն մնացած է: Նոյնպէս Ռուսիոյ պահանջած պասեքազմախն ստգանքին համար վոխանակ մէկ անգամէ վճարման՝ տարեկան 150,000 ոսկիի վճարմանը հաւանած է օտմ. կառավարութիւնը, բայց վճարման այս ձեւն ալ չէ ընդունուած: Երկու տէրութեանց յարաբերութիւններն այն աստիճան ձգտուած են որ մինչև իսկ գաւառներուն մէջ կը խօսուի սատերաւ մը հաւանականութեան վրայ:

Գահիրե, 28.7 Ապրիլ

Վերջապէս հասաւ այնքան սկիւկալութիւններով և այնքան անհամբերութիւնով սպասուած ու պահանջուած օրը: Այս երկու շաբթի երեսփոխանական ընդհանուր ժողովը իսպառմարեց առաջնորդարանի սրահին մէջ, Վ. Ե. Տիգրան փառայի աստուպետութեամբ և Յակոբ Կ. Վ. Առաջ նախագահութեամբ: Ամենէն աւելի մեկ հետաքրքրող խնդիրը օրակարգին մէջ, առաջնորդական ընտրութեան խնդիրն էր. բայց ստեպ ինչ զեւանդակական ճարտարութիւն բանեցուցին մեր պատկառելի երեսփոխանները՝ փոխանակ ուղղակի առաջնորդ չենք, և գերբնու: Առաջնորդ ընտրեցին Բզմբիկեան Սրբազանը որ արգէն միւսնոյն հոգեւոր պաշտօնը վարած է տարիներ առաջ եպիսկոպոսի մէջ և որուն արժանիքը ասկայն շատ քիչ գնահատուած են մեր եղբայրարանակ ազգայինները: Ասկից գաւտ, անկարելիութեան պարագայ մը առաջը անուելու համար, երկրորդ մը կընարեն. . . Յովսէփ Կ. Վ. Այվազեանը: Ա. Երրոյ է բսել թէ այս կրկնակի ընտրութիւնները գեույի կը յանգին, քանի որ Իզմիրլեան Սրբազանը զուրս չկրնար ելլալ երեսփոխանի պատերէն և Այվազեան վարդապետ ալ թերեւ հիմա արդէն սկսած է Ռոտտոթոյի առաջնորդական գործերը վարել (ինչ որ բնականաբար շատ լաւ գիտելին մեր երեսփոխանները):

—Էջմիածնի մէջ, ինչ բնեք, կը պատասխանուի մեզի, մէկ չէ երկու հոգի ընտրեցինք, մասունքնիս հոտուրտալու չինք որ երկուքն ալ չպիտի յաջողին:

Ու հիմա նորէն խեղճ ժողովուրդը տարիներ ու տարիներ պիտի սպասէ որպէսզի նոր երեսփոխանական ժողով մը գումարուի և զարձակ ձեռնարկուի առաջնորդի ընտրութեան:

Ու ասոնց ամենքը գիտէք ինչու համար. որպէսզի իրենց ներքին գործերուն խառնուող շունեան և առաջնորդի մը յատկացուելիք 20 ոսկի ամսականը ուրիշ պէտքերու ծառայեցնեն:

Անցած շաբթու Գահիրէի Խոյվական օրէրա թատրոնին մէջ տեղի ունեցաւ Բնթերցասիրաց բնկերութեան տարեկան նպաստի երեկոյթը:

Բաւական յաջողութիւն գտաւ այդ երեկոյթը շնորհիւ արկիւն Վելիֆի Նուարդի զմայելի կուրնելուն:

Ինչ որ սակայն մեզ կը զարմացնէ սա երկու անհաշտելի հակասութիւններն են: Ազգարարութիւններուն վրայ գրուած էր. «Ի նպատակ Բնթերցասիրաց բնկերութեան ազգասիրութեան ոգաց» և յաջող օրը Փարոսի մէջ կարգապիսի այդ ներկայացման համարտուութեանը արթնով. «Բաւական հատոյթ մը զոյացած է երեկոյթին և կը յուսայորի որ Բնթերցասիրաց բնկերութեան տարեկան պէտքերուն բուլ»:

Շատ շնորհակալ պիտի ըլլայինք եթէ մեզ տեղեկագրուէր թէ որ «ազգասիր» ուսանողին երկու փարատուեցաւ այդ հասոյթին:

Արդէն ի՞նչ կարելի է յուսայ այնպիսի բնկերութեան մէջ որ իր մէջ կը պահէ զանազան անուպատ անբաստանութիւններու սակ ճնշուած անձ մը, որուն անունը հարկ չկայ տալ. ա՛յնքան ծանօթ է:

Բարիկ, 1118 Ապրիլ

Ճրանասական ոստանին գիտական շրջանակներուն մէջ օրուան խընդիրն է բժշկական հայ ուսանողի մը Պ. Երուանդ Մանուէլեանի մէկ նոր գիւտը ջղային գրութեան վրայ:

Պ. Մանուէլեան Պոլսեցի ծանօթ ընտանիքի մը զաւակն է, ընթացաւար կեդրոնականի Ա. շրջանին: Հինգ տարի է ի վեր Բարիկ եկած է բժշկութիւն սորվելու: Երիտասարդ հայ գիտնականը աւելի մարդկութեան կուղի ծառայելի պիտի ըլլալով, քան իր սպայակը սորվել այս արուեստը: Երեք տարի առաջ կը յաջողի մեծանուն գիտնական Մաթիաս-Տիւվալի աշխատանոցը մըսնել, ուր երկու տարի շարունակ օրինակելի համբերութեամբ մանրագլուր ձեռքը կը բնու, ու կը գնէ ջղային գրութիւնը, 15 օրուան ծրնած կատաներու և շունեքու վրայ փորձեր կատարելով անոնց բնական իտելի մեք, և մինչև այսօր կողմի, Գահիրե և նոյն խիթ Մաթիաս-Տիւվալի մտքի մէջ ձգած կէտերն ու եկեղադրութիւնը բրած գիտերն հաստատուելու երեւան կը հանէ և մէկիկ մէկիկ կը ցուցունէ գանտք իր վարպետին. որ 97—98 Վերջին գաւախտութեան մէջ սաւանելին անգամ կը յիշէ Պ. Մանուէլեանի անունը, գանիկու իր «աշխատակից» ու ապագայ հիւսուածարան» կոչելով:

Մաթիաս—Տիւվալ կենդանաբանական բնկերութեան կը ներկայացնէ գիւտը ու անոր հեղինակը, որ ջերմ շնորհատրութիւններ կատանայ և կողմունուի իրբեւ ապագայ մեծ գիտնական մը: Ռոզիլի Սիւսերիֆի մէջ յիշալ զապախտութիւնն հրատարակուած ըլլալով, թէ վարպետը և թէ Պ. Մանուէլեան ամէն կողմերէ կըս-

տանան շնորհատրական նամակներ :
Հակառակ սակայն այս ամէն փա-
զաքչական ցոյցերուն , կեդրոնականի
նախկին առաջնորդուոր ուսանողը հի-

—Յաւօք կը ծանուցանեմ թէ
Բարձր. Լուսար. փաշա մահամեծ է :
ՏԻՃՕ

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—).—

Յօքառնէն մեզ կը գրեն թէ անց-
եալները այս քաղաքին մէջ մեծեր է
հայ գաղթականութեան և ն. անա-
կիի անդամներէն մէկը , Տօքթ. Էմ-

—Մարտ 28ին Թիֆլիսի քաղաքա-
պետական զանգիւծին մէջ տեղի ունե-
ցեր է հրատարակչական ընկերու-

—Անցեալ օր ծանուցինք թէ Մոս-
կուա ընակող Պ. Աւետիս Պօղոսեան

մեծ գումար մը նուիրած էր Թիֆ-
լիսի հայոց հրատարակչական ընկե-
րութեան : Այս օրինակէն խրախուս-

—Բազուի կիները զազալար մը
յղացած են օգնելու համար Թուր-
քիայէն հոն ապաստանող հայ գաղ-

—Հանգուցեալ բժիշկ Վախրամով
3,000 ռուպլի կտակեր է ի նպաստ

—Մինչև ցարդ Ուսղըրէն , Բրո-
վիտէնսէն և չըջականներէն (Միաց-
եալ-Նահանգներ) 1,000 տուրքին ա-

Ա Ջ Դ

Ամերիկայի մեր բաժանորդներուն
կը ծանուցանենք թէ Շարժումի Ա-

—Կը խնդրենք մեր արտասահմա-
նի բաժանորդներէն որ օտար նամա-

—).—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Պ.ՏԵՐԱՍՄԻ Ա. ԻՈՒՄ ԱՓԵՆԻ

Եթե օրէ ի վեր , ուր չերեւ-
ցաւ մեր թերթը , Ամերիկայի ու
Սպանիոյ մը ջեւ պատերազմ մը

Իսկ մտիկ չեն ընել Ամերի-
կայի շտէն ճիւղները : Գլուխ-
նին առեր կերթան , վերէն վար

—).—

հակամարդկային ու բարբարոսա-
կան է որ կատարէ Միացեալ-
Նահանգները պահանջել Սպա-

Սակայն կը մնար Երեսփ. Ժողո-
վին որոշումը : Վերջին հեռա-
գրերուն նայելով , այս ժողով

Ինչպէս կերեւայ , ամերիկեան
այս երկու մեծ ժողովներուն մէջ

Նախագահ Մաք Գինլի վարկաբեկ
եղած մարդ մըն է . չորս կողմէն նա-

Հոն , օրուան մարդն է զօրավար
Լի , Հավանաի նախկին հիւպատոսը .

—).—

ՎԱՐՄԱՊԱՏԵՐԿՈՎԻ ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆԸ (13)

Ընկերիս առաջարկութիւնը սխիւթ
ընդունեցի և գնացի ներկայ լինե-
լու մի ժողովի ուր լինելու էր և Գօ-

Ժողովը իմ ընկերներէց մէկի սեն-
եակում էր . հենց որ սենեակ մտայ ,

Մի խօսքով կատարեալ յեղափո-
խական հայթուկապետ :
Առաջին անգամից հրապարակեցի

Հաւթուանի , Պարսկաստանի և վեր-
ջապէս Վանա հայերի մասին : Հաւա-

Իրանից յետոյ Գօլջանը չուա
բարեկամացաւ ինձ և մի քանի ըն-
կերների հետ . մենք առանձին մի

որ անցնել Տաճկաստան :

Այդ միջոցներում ևս պատրաս-
տվում էի վերջնական քննութիւն
պալ Բաքուի ընկալական զարգացում :

Առաջ ևս չէի ուզում գնալ , որով-
հետեւ Տիֆլիսում էլ նիւթական վի-
ճակս լաւ չէր , թէև մասնաւոր գա-

լու ճանապարհ ընկայ Բաթում : Սկը-
սայ տաք կերպով պարապել : Այնտեղ

(Շարունակելի)

«ԻՐԱՒՈՒՆՔ»

Իրաւունքի խմբագրութիւնը կը խնդրէ մենէ ծանուցանել թէ անահնկալ ու ստիպողական պատճառներով այսօր չպիտի կրնայ հրատարակել իր թերթը :

Պ. Յ. ԷՆԿԻՊԱՐԵԱՆ

Վաղը իր անուան տարեգարածին առթիւ շնորհատրական այցելութիւնը չպիտի կրնայ ընդունիլ :

ԲՕԼԻԹԻԳԱ

Կ Ի Ր Ի Տ

Բեթրայուրկան շէքիւն պիտի թէլէկրաֆա կէօրէ, Ռուսիա Ձաւրը Ֆրանսա վէ Ինկիլիթերա հիւքիւմէթլէրիլէ միւթթէֆիդէն, գօնթ Մուրապիէֆին Կիրիտ աւտաւը հագգընտա հազըրլամըլ օլտուլու թանդիմաթ բրօթէսինի թասաիք իթմիշ տիր : Պու պապուտէ Եունան կաղէթաւարը աթիւտէքի թաֆսիլաթը վէրմէքսէ տիրէր :

«Կիրիտ ժանտարմա ալայլարը խրիսթիան վէ իսլամ Կիրիալիլէրտէն թէշքիլ օլունաճաղար տըր . քիւչիւք վէ պէօլիւք մէմուրլար տախի եէրլի էհալիտէն ալընաճաղար իսէ տէ, վալի իպիտա միւսթէսնա օլարագ իսթէալիկի էվօրա հիւքիւմէթիւնտէն վէ հաթթա Եունանիսթանտան խուսուսի սրէսիալիսթլէր կէթիթիթիթէպիլէճէք տիր :

Կիրիտին այլը պանտէրաուր օլաճագ, վէ առանըն մուհաֆազասը իշիւն ուֆաղ պիր տօնանմասը տախի պուլունաճագ սըր : Սուլթանըն հիւքիւմէթիլէրիլ (գերիշխանութիւն) եալընըլ իսմէն պաղը օլուպ, թիւքը հիւքիւմէթիլին աւրա առանըն տախիլի իշիլէրինէ գարըշմոյս հագգը օլմայաճագ տըր : Եալընըլ պիր գաշ խարիճի իշիլէր լիշիւն առանըն վալիսի սուրէթա Սուլթանըն ըրիզասընը իսթէյէճէք տիր :

Անէպէսէնէ Սուլթանա պէօլիւքը հիւքիւմէթլէրտէն մըգտաւընը թային օլընաճագ պիր վէրկի վէրիլէճէք տիր :

Պալատէ զիքը օլունան թէլէկրաֆըն պէյանընճա, բրէնս Եորկիոս պիր Բուս զըրհլըսը վէ պիր Ֆրանսալ, պիրուէ Ինկիլիլ վաքօրլարըլլա Կիրիտէ կիտէճէք տիր :

Բուսիա Ձաւրը մալիլէճէ տախի բրէնս Եորկիոսըն իշիլի գօլայլաթմագ իշիւն, Ֆրանսա վէ Ինկիլիթերա հիւքիւմէթլէրիլնէ Կիրիտ իշիւն 30 միլիոնըլ պիր իսթիդրաղ թէքիլիթ իտէճէք իսթիլ : Պունտան մատա, Ձաւր՝ Գաննատա, Բէթիլիօտա վէ Գանալիտա քէնաի բարաւըլլա մէքթէպլէր վէ հասթահանէլէր թէէսիս իթաիթէճէք տիր :

Ա՛ֆէրիմ Ձաւր :

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԷ ՍՊԱՆԻԱ

Միւճթէմէաի Ամերիկա վէ Ապանիա պէյնիլտէ իշիլէր ֆէնա սուրէթաէ պօղուրմագտա տըրլար : Պիր իքի կիւն զարֆընտա մուհարէպէնին պաշխանաճաղը վէ եա պաշխանաճաղը պէլլի օլաճագ տըր : Կէրէք Ամերիկա տա, կէրէք Սպանիա տա ֆիքիլիլէր մուհարէպէյէ մէյլ կէօրիւնիլար :

Ճիւմհուրիլէթ բէիսի Մաք Բիւնի ժէնէրալ Շօֆիլիթի քէնտիսինէ մուշալիլ (խորհրդական) ինթիլապ իթմիշ տիր . պու ժէնէրալ պիր միլիոն կէօնիւլլի առքէրտէն միւրէքքէպ պիր օլտու թէշքիլ իթմէկէ պաշխամըլ տըր : Էրքանը հուպ բէիսի Մաք Բիւնիլին էմը իթտիլի սըրտա Գուպայա առքէր նաղ իթմէք իշիլն վարօրլար հազըրլամագտա տըր :

Ապանիա վիւքէլա մէճիլիթ թրանսաթլանթիք գուրմանեաւ սը վարօրլարընըն հարպ սէֆիլնէլէրէ թէպուլիլնէ սայիր գաւարը վէրմիշ տիր :

Ամերիկա տա մերիկալլար թարաֆընտան Ապանիա ալէյհիւտէ օլան նիւմայիլլէրէ ճէվապէն շիմի Ապանիա շէհիլէրինտէ տախի սյնի մէնպարէլէր վուգու պուլմագտա : Ըր . Մատրիտտէ, Վալանտա վէ Պարսէլնտա պէօլիւք գարըշըլըլար զուհուր իտուպ օլիս միտալէլէ իտէքէք չօղլարը տէրտէսթ իթմիշ տիր : Սօն տէֆա, Մալիկա տա, Ամէրիքա գօնսօլտու հանէսէ էօնիւնտէ շէտիտ պիր նիւմայիլ իճրա օլունուպ, գաֆալարը գըլլըն Ապանիա օլար գօնսօլտու հանէ ճամլարընը զըրըպ, գօնսօլտո հաֆիթաւընը եէրինտէն գօրաւըրլար վէ սօգաղարտա սիրիքլէմիշլէրտիր . օլիս եէթիլիլ էհալիլ տաղըմըլ վէ եաֆիթայը եէրինէ վալ իտուպ Ամէրիքա գօնսօլտու ման մուգուսթ իշիլն աֆ թէմէնի իլլէմիշ տիր :

Նիւ-Եորքտան Ամանա Հալատա քէշիտէ օլունան պիր թէլէկրաֆա կէօրէ, մէճիլըլ ալան վէ մէճիլըլ մէպուտան պէյնիլտէ վուգու պուլան միւշալէրէտէ՝ Գուպա առաւընըն ճիւմհուրիլէթիլ թանըմագ թէքիլիթիտէն մատա մէճիլըլ ալանըն (ժերալիլ) վէրտիկի գարալլարը քեա միլէն գապուլ օլունաճաղար տըր :

Ուաշինթըն Ապանիա էլլիսի Պ. Պէրնայ՝ Ամէրիքա մէճիլըլ ալան վէ մէպուտան մէճիլըլ գաւարալարընը գապուլ իթտիկի անտէ շէնըլ մէպուրտէն միւֆտալէթ իտէճէք տիր :

Ամէրիքա մէճիլըլ ալան վէ մէճիլըլ մէպուտան գարալընը Մ. Մաք Բիւնի թարաֆընտան իմ-

զալանտըրտան սօնրա, հիւքիւմէթ տէրագապ Ապանիայ «Իւլիլիմաթօմ»ը (վերջնագիր) թաղալ իմ իտէճէք տիր :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

«Թան» կաղէթաւարնա Սոֆիա տան շէքիլէն պիր թէլէկրաֆա կէօրէ, բրէնս Ֆէրտինանա՝ վիւքէլա մէճիլըլ բէիսի Մ. Սթօյիլիլ ֆըն պիր գաշ ալտան պէրի նամիւշըլըլ սէպէպիլլէ պիր իքի քէրրէ վէրմիշ օլտուլը իսթիֆայը գապուլ իթմէյուպ, գարիպէն իքի ալ իշիլն մէքուրիլէթ ալմասընը միւստատէ իթմիշ : Մ. Սթօյիլիլ մայիս ալընտա էմսէ կիթմէյէ նիլէթիլնտէ օլտուլընը քէնտի տօսթլարընա սէօլլէմիշ տիր :

«Կիրիտի թէսքիլն իթմէք իշիլն ամիրալլար առայլ տէօրթ զըմա պէօլիլլէր տիր . Ղարպ զըմընը իթալիալլարա, Սիթիլըլ վէ Հէրալէթըլըլ Ֆրանսալլարա, Գանտիլըլ Ինկիլիլլէրէ վէ Բէթիլիլ Ռուսալա հէվալէ օլունմըլ տըր : Գաննալը վէ քէօրֆէլիլ հէր սէվլէթ միւսթաաֆըլ սաքէրի թարաֆընտան շապթ օլընաճագ տըր : Եէնի զուպթ օլընան մէվըրլարտան օսմանըլ մուսթաաֆըլ սաքէրին հարպէկարը թէնըլ օլընմասընը ամիրալլար թալէպ իթմիշլէր տիր :

«Վատիկանտա պիր օմ . սէֆարէթի իշաասը հագգընտա Պապը Ալիլին վէրմիշ օլտուլը գարար Սթանպօլ Ֆրանտա սէֆարէթինէ բէք ֆէնա թէէսիլ իթմիշ տիր, զիրա պէօլլէճէ Շարք կաթիլիլլէրին իզէրինէ Ֆրանտանըն աղըրլարտան պէրի իճրա իթ. իկի հիւմայիլ ճագլարը թանըլմայաճագ տըր : Պունտն իշիլն սէֆարէթ Պապը Ալիլին էլ իղաթ թալէպ իթմիշ տիր : Հալպուքի բարա Պապը Ալիլիլ զաթէն պիրտիրմիշ տիր . քի Վատիկանտա պիր օմանըլ սէֆարէթին իշտասը ֆայաթիլ պիր շէյ տիր :

«Պէլլրատտան եազըլալընա կէօրէ, գրալ Ալիլքանդը՝ Վալատան Եորկիլիլ զապիլնէսինէ վէ Միլանըն հարէքիաթընա գարըլ մէմէքթէթաէ առապէթիլն կիթտիքէ արթմագտա օլտուլընը կէօրէքէք, ֆիթիլիլ Սըրպիա սէֆիլի Մ. Մալա-Կրուիլի Պէլլրատա շաղըմըլ տըր . քի մէմէքթէթաէ գանունը էտաի սիդէմիլնի թէէսիլ էլլէսին :

ՇՆՈՐՀԱՎԱՍԼՈՒԹԻՒՆ

—)(—

Ստորագրեալս Աննա Տր. ճումէրքա, ծնեալ Ձիտի նէմյօլու, և ամուսին հանգուցեալ Տր. ճումէրքասի, ներկայիւ շնորհակալութիւն կը յատնեմ «Նիւ-Եորք» ամերիկեան կեանքի ապահովագրական ընկերութեան, որ սուլ ժամանակի մէջ, իր ֆի-

լիպէի գործակալներու, Պ. Պ. Պարլօլի և Կէնտօլի միջոցաւ ինձ վճարեց երեսուն հազար ֆր. սակգրամ, գումար որով ամուսնիս կեանքը ապահովագրուած էր :

Աննա Տր. Ս. ճումիտֆա Ֆիլիպէ, 31 Դեկտ. 1897

ՀՐ ԻԷՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՈՑ

Առժամայ զորժողիլ ժողովին պաշտօնաւարութեան շրջանը լրացած ըլլալով, կը խնդրուի ճեղմը որ առաջիկայ կիրակի (Ապրիլ 12) օրը կէս օրէ վերջ ժամը Ձին ներկայ ըլլաք ընթերցարանի սրահը գումարուելիլք ընդհանուր ժողովին :

- Օ Ր Ա Վ Ա Ր Գ
1. Ընտրութիւն Մայր դիւանի .
2. Համարատուութիւն առժամայ վարչութեան ,
3. Ընտրութիւն նոր վարչութեան :
Ի զիմաց առժամայ Գործ. ժողովոյ Սիւսկեան Ընկերութեան
Վ. Ատենաղարի Ատենաղա
Ս. Տիոնեան Վ. Մանուկեան
Վառնա, 9 Ապրիլ

ԿՈՐՄՈՒՄԻ

Փոքր Արմտանցի Կան Գալիթ Բարիկեան անուն 19 տարեկան երչտասագ մը երկուքուկէս տարիէ ի վեր անյայտ է . ու թէլէլիլ բարեկամներ լսած են թէ այդ պարուն Ռումանիլոյ ու Պուլկարոյ կողմէրը լը գտնուի, ցարք հաստական լուր մը առնուած չէ : Ուտի կը խնդրուի այն աղպայիններէն որ յիշեալին սէր, ողջ կամ մեռած ըլլալուն մասին տեղեկութիւն ունին, հաճին ուղղակի իմաց ալ մարագրութեանս : 2—3

ՊՕՐՍԱ

- Վառնա 11 Ապրիլ
ՊՈՒՂՏԱՅ
Վալոն, լիպրա 47—51, հէքթօլ. 11—11.75 ֆրանք
Արապա, լիպրա 47—55, հէքթօլ. 10—12.40 ֆրանք
ԱՐՔԱ.
Լիպրա 38—40 հէքթօլ 5.20—5.40 ֆրանք
ՄՐՍՐՐ
Վալոն, լիպրա 57—58 հէքթօլ. 6.50—6.80 ֆրանք
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ. 6.80—7 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵԱ

100 օգլար 15—20 ֆրանք՝ մալա կէօրէ
Առապա մուսթէլէսի նարօլոն 21 ֆրանք հիսալը իլէ տիր .
Կիւնտէ 8—10 վալոն վէ 15—20 արապա պուլապ, 10—15 արապա արա, 1—2 վալոն վէ 8—10 արապա մըսըր կէլմէքտէ տիր :

ՏՊԱՐԱՆ, «ՇԱՐԺՈՒՄ»Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատմա, հասցեատմա, նամակաղբիւր, հարսանեկան հրատիրագիր, մահաղգ, ինչպէս նաև պօշխուհիք :
Գիտերն յոյժ գլըրամառչելի :
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

Печатница «Взаимность» Варна.